խաչ և ոչ պատկեր, մակերևույթը օրնամենտներով և թևերի ծայրերին ու կեդրոնում մի մի մետալիոնով. խաչի մարմինը, պղինձ է, բայց ծածկուած մասամբ արծաթի ոսկեջրած շերտով(1). բայց սրանցից ոչ մէկը նման չէ մեր խաչին։ Համեմատաբար աւելի նման է թևերի վերջաւորութիւններով Ստրոգանովի ժողովածուի խաչը, որ Diehlը Զ. դարու գործ է համարում, Reilը Ը. դարից ոչ ուշ, իսկ Սմիրնովը Թ. դարից առաջ, մակերեւոյթը զարդարուած քարերով(2), ասորական ծագմամբ։

Հայ-Վիրական արուեստի մէջ Ե-Է. դարերի եկեղեցիների և գերեզմանական կոթողների վերայ քանդակուած խաչերը չեն նոյնանում այս խաչի հետ, բացի ոմանց թևերի ծայրերի և վարդեակների թեթեւ նմանութիւնը(1)։ Աւելի ուշ ժամանակի խաչաքանդակներ, ոչ վաղ քան Ժ-ԺԱ. դարը մօտ են այդ կողմից մեր խաչին(2)։ Այս բոլոր հանգամանքները ի մի հաւաքած պէտք է մեծ զգուշաւորութեամբ վերաբերուինք նաև դէպի ամբողջութեան Է. դարում ծագման աւանդութիւնը։

Թ.

Խաչի ձևակերպութիւնից և նրա հետ կապուած այս արտաքին ցուցումներից աւելի կարևոր նշանակութիւն ունին մեր Սբրբութեան ժամանակը որոշելու համար խաչելութեան առանձնայատկութիւնները։ Մեր Ամենափրկիչը, թէեւ բուն խաչելութիւն չէ, այլ խաչից իջեցնելու պատկեր, բայց համեմատելի է հնագոյն խաչելութիւնների առանձնայատկութիւնների հետ՝ ժամանակի վերաբերութեամբ զուտ հնագիտական ցուցումներ ևս ստանալու համար։

Խաչելութեան պատկերները մինչև Ը. դար երկու բնորոշ խմբի կարելի է բաժանել, ինչպէս մանրակրկիտ ուսումնասիրութեամբ ցոյց է տուել Reilը(3). առաջինը կարելի է Մոնցայի իւղաշշերի տիպ անուանել, որ իսկապէս խաչելութիւն չէ, այլ այդ գաղափարի սիմվոլիկ արտայայտութիւն. բուն խաչելութեան փոխարէն խաչի գլխին Յիսուսի մետալիոնը կամ անդրին նիմբուսով։ Մոնցայի շշիկների հնագոյնները Զ. դարի վերջերից են, բայց պատկերների մոտիւներն աւելի հին, երբ գըժուարանում էին դաւանաբանական և զեղասիրական տեսակէտներով պատկերաւորել խաչեցեալ Փրկչին. նախ խաչն էր խաչելութեան տեղը բռնում և ապա սիմվոլիկ խաչելութիւնից բուն պատկերագրութեան անցնում։ Այդպիսի հայեացքի հետ էր կապուած նաև, որ խաչի կեդրոնում ձևացընում էին գառն Աստուծոյ, ինչպէս Յուստին Բ.ի վերոյիշեալ խաչի վերայ ենք տեսնում. Հինգվեցեան (Quinsextum) ժողովն արդէն իւր 82րդ կանոնով յանձնարարում է գառն Աստուծոյ փոխարէն՝ Յիսուսի մարդկային պատկերը գործադրել(3)։

Հայ գերեզմանական կոթողների արուեստն էլ, հաստատուն կերպով կապուած միջագիտական-սասանեան հոսանքի հետ Դ-Զ. դարերում, տալիս է նոյնպիսի հասկացողութիւնների ապացոյց։ Մաստարայում գտնուում է քառանկիւնի մի կոթող, վատ պահուած վիճակում, մի երեսին քանդակուած է ձողաբարձ խաչ, գլխին Յիսուսի անդրին՝ քառանկիւնի շրջանակի մէջ (պոպկ. 18)(1)։ Իսկ խաչի ձևը յար և նման Լենինգրադի էրմիտաժի վաղ բիւզանդական բաժնում ցուցադրած մի խաչի, որի ժամանակը 400 թիւն է նշանակած, տարաբաղդաբար N-ը չունինք նշանակած։ Կոթողի ճարտարապետական պիլաստրներն էլ մատնացոյց

(1) Diehl. 291։ Carl Maria Kaufman. Christ. Archäologie. 1905. 530։

(2) Diehl. 297։ Reil. Kreuzigung Christi. Lpzq. 1904. 53|4։ Smirnow. Bostotschnoe Serebro. 7. Tabl. XV.

(3) Die Frühchristlichen Darstellungen der Krenzigung Christi. Lpzq. 1904. 51|52. 99|100։ Krause. Geschichte der Christ. Kunst. I. 172-173։ Pokrowski. Ocerki Pamiatnikow xristianskawo Iskysstwa i Ikonographii. SP. 1910. 185։

(1) Tschubinaschwili. Die Kirche von Mzcheta. 1921. 46։ Tabl. VII.։ Strzygowski. Die Armenische Bankunst. 1918. 717 (պատ. 679)։

(2) Strzygowski Arm. B. K. 258։

(3) Hefele. Conciliengeschichte. երկր. հրատ. III. 340։

(4) Լուսանկարի համար պարտական ենք Թ. Թորամանեանի սիրալիրութեան։